



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

03» 04 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000029

Ձեռնարկողը՝

«Աքսես Բոնասայթ» ՍՊԸ

2-րդ Աղյուսագործների փող., տուն 48

Գործունեությունը՝

Սարչապետ համայնքի Պրիվոլնոյե բնակավայրում 29.82հա
տարածքի անտառապատում ծրագրի շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ

Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 3 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000029

<03> 04 2020թ.

Լոռու մարզի Սարչապետ համայնքի Պրիվոլնոյե բնակավայրում 29.82հա տարածքի անտառապատում ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝

«Աքսեսս Քոնսալթ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝

«Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝

Լոռու մարզի Սարչապետ համայնք

«Էյ-Թի-Փի» հիմնադրամը նախատեսում է 2020 թվականի գարնանը և աշնանը իրականացնել Լոռու մարզի Սարչապետ համայնքի Պրիվոլնոյե բնակավայրում 29.82հա տարածքի անտառապատման ծրագիր:

Նկարագրական մաս. Պրիվոլնոյե բնակավայրում անտառտնկման համար նախատեսված տարածքը Լեջանի երբեմնի անտառապատ լանջերից է եղել, որի մասին վկայում են տարածքում առկա թփատեսակները (մոշենի, մասրենի և այլն): Անթրոպոգեն ազդեցության արդյունքում այն վերածվել է հետանտառային տափաստանի, որը հետագայում կարող է վերածվել անապատի: Տարածքն արիդացվող է (աստիճանաբար անապատացվող հողեր) և մասնակի էրոզավտանգ, հետևաբար այստեղ անտառային զանգվածի ստեղծումը նաև հակաէրոզիոն միջոցառում է հանդիսանում: Այս համայնքում անտառային զանգվածի հիմնումը միաժամանակ բնական լանդշաֆտի կառուցվածքային միավորի վերականգնման նպատակ ունի: Անտառային զանգվածները կարևոր դեր կունենան ագրոլանդշաֆտներում պաշտպանական գործառույթ իրականացնելու, կայունությանն ուղղված գործընթացներն ապահովելու գործում: Առանձնապես կարևոր է քամիների ռեժիմի մեղմման, ինչպես նաև ջրային հաշվեկշռի կարգավորման առումով:

Պրիվոլնոյե գյուղը գտնվում է Լոռու մարզում, Ուռուտ գետի հովտում: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1600մ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 54կմ, դեպի հյուսիս-արևմուտք: Պրիվոլնոյե գյուղի տարածքը գտնվում է Լեջանի լեռնազանգվածի հյուսիս-արևմտյան լանջին, Պրիվոլնոյե և Սվերդլովո գյուղական բնակավայրերի միջև: Լանջն ամբողջովին ունի հարավ-արևելյան կողմնադրություն:

Անտառապատման ենթակա և հարակից տարածքներում չեն հայտնաբերվել Հայաստանի էնդեմիկ բուսատեսակներ, պատմամշակութային հուշարձաններ:



Նախատեսվող տնկարկները հիմնելու արդյունավետությունն անտառածման պայմանների առկայությունից և տարածքի անտառափտանիությունից բացի մեծապես կախված է ծառաթփատեսակների ճիշտ ընտրությունից: Նախատեսվում է օգտագործել հետևյալ տեսակները՝ Սոճի Կովկասյան (*Pinus hamata*)՝ 700 տնկի, Կաղնի խոշորատեջ (*Quercus macrantera*)՝ 400 տնկի, Հացենի սովորական (*Fraxinus excelsior*)՝ 300 տնկի, Հաճարենի արևելյան (*Fagus orientalis*)՝ 200 տնկի, Խնձորենի արևելյան (*Malus orientalis*)՝ 300 տնկի, Տանձենի կովկասյան (*Pyrus caucasica*)՝ 300 տնկի, Արոսենի (*Sorbus*)՝ 200 տնկի, Ազնվամորի (*Rubus*)՝ 900 տնկի:

Այսպիսով, ընտրված տարածքի համար կազմվել է անտառտնկման սխեմա, որտեղ նախընտրելի է համարվել խառը տեսակակազմը՝ տնկարկի էկոլոգիական կայունության նկատառումով: Տեսակները խառնելու և տեղաբաշխելու համար նկատի է առվել ինչպես հողակլիմայական պայմանները, այնպես էլ տեսակների փոխհարաբերությունը՝ կայուն համակեցություններ ստեղծելու նպատակով: Ընդ որում, նախատեսված է ասեղնատերևավոր (սոճի Կովկասյան) և լայնատերևավոր տեսակները խառնել՝ ինչպես շարքերով, այնպես էլ շարքերի ներսում: Տնկարկի համար ընտրված տարածքների լանջային թեքության ու դիրքադրության, մակերևույթի ողորկության և քարքարոտության աստիճանի, մայր ապարների առկայության, միկրոռելիեֆի ձևի համապատասխան կատարվում է հողի մշակման և տնկման ագրոտեխնիկական եղանակների ու միջոցների ընտրություն: Մինչև 15° թեքություններում տնկումը կատարվելու է խրամատներով, որի դեպքում փուխր և բավարար խոնավ հողային միջավայրն ապահովվելու է բույսերի բարձր կաջողականություն և պահպանվածություն: Նախատեսվում է խրամատի փորում 8-10մ երկարությամբ՝ 1-2մ ընդհատումներով, խրամատների միջև (միջշարային) հեռավորությունը՝ 2-3մ: Զգալի թեքությունների դեպքում՝ ջրի քայքայիչ գործունեությունը կանխելու նպատակով խրամատները տեղաբաշխվելու են շախմատաձև, 2 մետրից ոչ պակաս ընդհատումներով: 15°-ից մեծ թեքության լանջերին տնկումը կատարվելու է փոսերով, որոնք պետք է ունենան 30-40սմ տրամագիծ և նույնքան խորություն:

Ծառատեսակների կաջողականությունը մեծապես կախված է նաև տնկման լավագույն ժամկետի ընտրությունից: Նախատեսվում է տնկումը կատարել գարնանը և աշնանը՝ տեղումների շրջանում, որը հնարավորություն կտա, առանց ոռոգման ապահովել բույսերի արմատային համակարգի և հողի առավելագույն շփման պայմաններ, իսկ փուխր հողափոսերում և խրամատներում՝ շատ տեղումներ կուտակել:

Նախատեսված տնկանյութը հիմնականում բաց արմատային համակարգերով տնկիներ են՝ Մարգահովտի «Միրաք» տնկարանում աճեցրած, սակայն տնկման հետագա փուլում կօգտագործվի նաև փակ համակարգերով տնկիներ, դարձյալ նույն տնկարանից: Ազնվամորու տնկանյութը ձեռք կբերվի այլ տնկարանից: Անտառտնկարկներում նախատեսված է նաև տնկման զուգահեռ կատարել մուլչապատում, որը նպատակ ունի կանխելու ոչ միայն ջրի անարդյունավետ գոլորշիացումը, այլև տնկու շրջակայքի մոլախոտացումը: Այն կատարվելու է տարբեր նյութերով՝ ծառերի ճյուղերի և կոշտ ցողունների մանրացված տաշեղ-կտորտանքով, խոշոր թեփով (արևահայաց լանջերին), առանձին դեպքում՝ մանր քարերով (քամոտ լանջերին): Հետագայում էլ նախատեսված է իրականացնել խնամքի որոշ աշխատանքներ՝ քաղհան-փխրեցում, սանիտարական վիճակի հսկողություն: Ընդ որում, քաղհան-փխրեցման կարիք զգացվում է հատկապես խոտաբույսերի աճի շրջանում, իսկ բույսերի ֆիտոսանիտարական վիճակի հսկողություն կիրականացվի վեգետացիայի ամբողջ ընթացքում՝ վնասատուների և հիվանդությունների վերահսկման նպատակով: Տնկիների նորմալ աճի համար, ելնելով հողային պայմաններից, ցանկալի միջոցառում է նաև ցածր չափաբաժիններով ֆոսֆորան և կալիումական պարարտանյութերի կիրառումը, որը կարելի է իրականացնել տնկման գոգրից P₃₀K₃₀ չափաբաժնով (մեկ բույսի հաշվով՝ 4գ սովորական սուպերֆոսֆատ և 2,5գ կալիական աղ): Այս և մի շարք այլ գործողությունների շնորհիվ նվազագույնի կհասնի տնկիների անկումը,

կբարձրանա բույսերի կաչողականությունն ու պահպանվածությունը, ինչը կվերահսկվի բույսերի վիճակի ֆենոլոգիական դիտումներով և կենսամետրական չափումներով:

Գյուղատնտեսական կենդանիների մուտքը տարածք սահմանափակելու համար նախատեսվում է տարածքը ցանկապատել: Տարածքը ցանկապատվելու է մետաղական փշալարով: Փշալարի ամրացման համար իրարից 4մ հեռավորությամբ տեղադրվելու են երկաթ-բետոնե սյուներ, որոնք ամրացվելու են քարերով և հողով: Սյուների վրա ամրացվելու են չորս հորիզոնական և մեկ անկյունագծային փշալար:

Հաշվի առնելով այն փաստը, որ կրճատվող արոտների մի մասը թույլ էրոզացված ու էրոզավտանգ են, որոնց հետագա շահագործումը կարող է բուսածածկի ու հողածածկի խորը դեգրադացման և քայքայման պատճառ դառնալ, ապա տվյալ պարագայում անտառտնկումը կհանդիսանա կանխարգելիչ միջոցառում: Վնասատուների և հիվանդությունների տարածումը հատկապես ռիսկային է պտղատու տնկարկների համար, եթե չկատարվի տնկարկի սանիտարական հսկողություն: Տնկիների կաչողականությունը կախված է տնկանյութի որակից և նախատեսված ագրոտեխնիկական միջոցառումներից, որոնք կիրառվում են ոչ միայն՝ անջրդի, այլև էքստրեմալ պայմաններում բույսեր աճեցնելու համար:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը համայնքի կողմից արժանացել է հավանության:

Ամփոփելով կարելի է եզրահանգել, որ նախագծի իրականացման արդյունքում անտառածածկ տարածքների ընդլայնումը շրջակա միջավայրի վրա կունենա դրական ազդեցություն՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ սանիտարահիգիենիկ տեսանկյունից: Անտառապատման արդյունքում կկանխվի հողային էրոզիան, արիդացումը, կկարգավորվի ջրային ռեժիմը՝ նվազեցնելով հրդեհների առաջացման ռիսկը, կբարելավվի կլիմայական պայմանները և կնպաստի անտառի բնական վերածին:

Փորձաքննական պահանջ

Անտառապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական նորմերը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Աքսեսս Քոնսալթ» ՍՊԸ կողմից ներկայացված Լոռու մարզի Սարչապետ համայնքի Պրիվոլնոյե բնակավայրում 29.82հա տարածքի անտառապատում ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննության պահանջի պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ



Հ. Ալեքսանյան